ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

4 մարտի 2021 թվական N8

## ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 4-ի N2 արտահերթ նիստի օրակարգը՝
1)Մեղրի համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.
2)Մեղրի համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին.
3)Մեղրի համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանին հավանություն տալու մասին.
4)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Գևորգ Լյովայի Հարությունյանին օտարելու մասին.
5)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Վազգեն Սլավիկի Համբարձումյանին օտարելու մասին.
6)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Անահիտ Երվանդի Ղազարյանին օտարելու մասին.
7)Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին.
8)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2020 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.
9)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող օրինական ճանաչված կառույցը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) Արսեն Գուրգենի Բաբայանին օտարելու մասին.
10)Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի N6 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
11)Մեղրի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասի օտարմանը համաձայնություն տալու մասին.
12)Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.

13)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման խողովակաշարը աճուրդով օտարելու մասին.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Կողմ (7) | | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|---|
| ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ | ---------------- | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | ---------------- | | |
| ՋԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ | ---------------- | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ | ---------------- | | |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ | ---------------- | | |
| ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ | ---------------- | | |
| ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ | ---------------- | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4

ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
4 մարտի 2021 թվական N9

# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի կարծիքը (եզրակացությունը), համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ----------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ ----------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ
4 մարտի 2021 թվական N10

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով, հիմք ընդունելով ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու մշտական հանձնաժողովի կարծիքը (եզրակացությունը), համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Մեղրի

Հավելված
Մեղրի համայնքի ավագանու
2021թ. մարտի 4-ի թիվ 10 որոշման

***Մեղրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ***

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

| Հ/Հ | Ծրագրի անվանումը, | Նախահաշիվ/մլն.դրամ/ | Իրականացված (2017թ) | Իրականացված (2018թ) | Իրականացված (2019թ) | Իրականացված (2020թ.) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | Հանրային տրանսպորտի ներդրում Մեղրի համայնքում | 103,6 | 12 405 | 89,9 | — | — | 2017 հանրային տրանսպորտի ծառայության մատուցումը կազմակերպվում էր մասնավոր հատվածի ներգրավմամբ, իսկ 2018 թ.<<Ենթակառուցվածքների զարգացում Մեղրի համայնքում>> ծրագրով ներդրվել է հանրային տրանսպորտի ամբողջական համակարգ. ձեռք է բերվել 3 միկրոավտոբուս, կառուցվել է 11 կանգառ, կազմակերպվում են միջբնակավայրային կանոնավոր ուղևորափոխադրումներ: |
| 2 | Մանկապարտեզի կառուցում Վարդանիձոր գյուղում | 37,0 | 20,0 | 15,4 | 0,0 | — | Կապարված է: Մանկապարտեզի շենքը 2019թ. սեպտեմբերից հանձնվել է շահագործման: |
| 3 | Մանկապարտեզների կառուցում Լիճք, Լեհվազ. Շվանիձոր, Կարճևան գյուղերում | 95,5 | 0,0 | 0,0 | 0,0 | 33,3 | Շվանիձոր գյուղում մանկապարտեզի և բուժկետի համար հատկացված շինության վերանորոգման, Լեհվազ գյուղի մանկապարտեզի հիմնանորոգման նպատակով ներկայացվել է սուբվենցիոն ծրագիր, որն արժանացել է հավանության. Շինարարական աշխատանքներ և՛ Լեհվազում, և՛ Շվանիձորում ընթացքի մեջ են գտնվում: |
| 4 | Մանկապարտեզի կառուցում Նռնաձոր գյուղում | 25,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Իրականացվում են ֆոնդհայթայթման աշխատանքներ: |
| 5 | Մանկապարտեզի կառուցում Ալվանք գյուղում | 25,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Գործում է նախակրթարան: |
| 6 | Մեղրի քաղաքի մանկապարտեզի վերանորոգում | 323,9 | 0,0 | 0,0 | 21,5 | 153,5 | Սուբվենցիոն ծրագիր է, գտնվում է իրականացման ընթացքի մեջ: Իրականացվում է համայնքի, և պետական բյուջեի միջոցներով, «Իմ քայլը» հիմնադրամի համաֆինանսավորմամբ: |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Ճանապարհային սպասարկման համակարգի ձևավորում և համապատասխան տեխնիկայի ձեռքբերում | 106,9 | 0,0 | 95,6 | — | — | Արդեն ձեռք է բերվել ճանապարհային սպասարկման համակարգի ներդրման համար անհրաժեշտ 2 էքսկավատոր և մեկ ինքնաթափ: |
| 8 | Գյուղմթերքի փոխադրման կազմակերպում և բեռնատար մեքենայի ձեռքբերում | 20,0 | 0,0 | 0,0 | 0,0 | — | Չի իրականացվել: |
| 9 | Փողոցային լուսավորության անցկացում Մեղրի համայնքի բոլոր բնակավայրերում | 18,6 | 21,0 | — | — | — | Կատարված է: |
| 10 | Ագարակ քաղաք մտնող մայրուղու հարևանությամբ <<Հայ-իրանական>> զբոսայգու կառուցում | 312,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Չի իրականացվել: |
| 11 | Քաղաքացիական սպասարկման գրասենյակի հիմնում | 8,5 | 8,7 | — | — | — | Կատարված է: |
| 12 | Բնապահպանական մարտահրավերները հնարավորությունների վերածելով՝ պլաստիկ աղբից շինանյութերի ներմուծում | 390,0 | 390,0 | — | — | — | Ծրագրի շրջանակներում Մեղրի համայնքին հատկացրել են մամլիչներ՝ պլաստիկ աղբի մամլման նպատակով և պլաստիկի տեսակավորման աղբամաններ:Համայնքի կողմից մշակվել է նաև աղբահանության կառավարման ռազմավարական պլան: |
| 13 | Մեղրիի Սբ. Սարգիս եկեղեցու պահպանում և որմնանկարների վերականգնում | 216,0 | — | — | — | — | Կատարված է: Իրականացվել է Ռիչարդ Միլսի հիմնադրամի կողմից: |
| 14 | Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգում | 50,0 | 53,9 | — | — | — | Իրականացվել է: |
| 15 | Լիճք գյուղում Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում | 10,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 16 | Նռնաձոր գյուղում Մեղրիի համայնքապետարանի ներկայացուցչական շենքի կառուցում | 10,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 17 | Մեղրի քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում և ճշմարիտ տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում | 150,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 18 | Գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրիի մասնաճյուղի վերանորոգում | 50,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 19 | Լեհվազ գյուղի մշակույթի տան վերանորոգում | 30,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 20 | Մեղրի քաղաքում երկրագիտական թանգարանի հիմնում | 10,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 21 | Ագարակ քաղաքի նախկին կաթսայատան շենքի հիմքի վրա մարզադպրոցի կառուցում | 115,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 10,0 | 2020 թվականի պետական բյուջեից հատկացում ստանալու նպատակով ներկայացված սուբվենցիոն ծրագիրը ստացել է դրական եզրակացություն:Շինարարական աշխատանքերն ընթացքի մեջ են: |
| 22 | Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն | 3,6 | 9,6 | 6,6 | 1,9 | 1,8 | Դիմումների հիման վրա տրամադրվել է սոցօգնություն: |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | Մեղրիի նախկին պոլիկլինիկայի և Ագարակի նախկին հիվանդանոցի շենքերի վերափոխում բազմաբնակարան շենքերի | 150,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | Ագարակի հիվանդանոցի շենքը նվիրաբերությամբ ստանալու և վերակառուցելու նպատակով հանրօգուտ ծրագիր է ներկայացվել է պետական գույքի կառավարման կոմիտեին: Գտնվում է քննարկման փուլում. |
| 24 | Բազմաբնակարան շենքի կառուցում Մեղրի քաղաքում | 50,0 | 0,0 | 0,0 | 0,0 | | Դեռևս չի իրականացվել: |
| 25 | Բազմաբնակարան շենքի կառուցում Ագարակ քաղաքում | 50,0 | 0,0 | — | — | — | Շինարարական աշխատանքներն իրականացման ընթացքի մեջ են:Իրականացվում է մասնավոր հատվածի կողմից: |
| 26 | Մեղրիի մանկապարտեզի հարակից տարածքի բարեկարգում, կանաչապատում | 10,0 | 0,0 | 0,8 | — | — | Ամբողջությամբ իրականացվել է: |
| 27 | Մեղրու բերդի վերանորոգում | 10,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 28 | Մեղրի համայնքի գլխավոր հատակագծի կազմում | 9,0 | — | — | — | Առկա է | Կազմվել է պետական միջոցներով: |
| 29 | Մեղրիի կոմունալ տնտեսության հավաքակայանի կառուցում | 30,0 | 0,0 | ոչ դրամական ներդրում | — | — | Մեղրիի կոմունալ տնտեսությունն արդեն ունի հավաքակայան: ՊՆ-ի դիվիզիոնի նախկին շենքն ու հարակից տարածքն այժմ ծառայում են որպես հավաքակայան:Կիրականացվեն նաև վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ: |
| 30 | Մեղրի քաղաք մտնող այլընտրանքային ճանապարհի ասֆալտապատում | 20,0 | 0,0 | 100,0 | — | — | Իրականացված է: |
| 31 | Ագարակ քաղաքի փողոցների ասֆալտապատում | 159,9 | 0,0 | 0,0 | 0,0 | 159,9 | Ագարակ քաղաքի փողոցների ասֆալտապատում ծրագրի շրջանակներում իրականացվել է ընդհանուր առմամբ մոտ 981մ երկարությամբ ճանապարհահատվածների ասֆալտապատում (ներառյալ Գ. Նժդեհ փողոցից դեպի Չարենցի փողոց, Աբովյան-Թումանյան խաչմերուկից դեպի Աբովյան-Շինարարների խաչմերուկ, Ս. Նովա փողոցից դեպի գերեզմանատուն, Գ. Նժդեհ փողոցից դեպի Ագարամարտիկների փողոց տանող ճանապարհահատվածները) |
| 32 | Ագարակ քաղաքի նախկին հիվանդանոցից Չարենց փողոցի թիվ 40 շենք տանող ճանապարհի ասֆալտապատում | 50,0 | 0,0 | 0,0 | 0,0 | — | Դեռևս չի իրականացվել: |
| 33 | Լեհվազ գյուղի կենտրոնական փողոցի ասֆալտապատում | 10,0 | 0,0 | 0,0 | 0,0 | — | Դեռևս չի իրականացվել: |
| 34 | Մեղրի քաղաքի Գործարարների փողոցի՝ 800մ հատվածում մայթերի կառուցում, ծառապատում, լուսավորության անցկացում | 30,0 | 0,0 | 8,4 | — | — | Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից անց է կացվել փողոցային լուսավորության համակարգ: |
| 35 | Նկուղային հարկերում թաքստոցների նորոգում | 15,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 36 | Համայնքի գյուղերում հանգստի գոտիների ստեղծում, հուշարձաններին հարող տարածքների բարեկարգում | 15,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Իրականացվում են ֆոնդհայթայթման աշխատանքներ: |
| 37 | Դիահերձարանի կառուցում | 15,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | Վանք - Կայեր կամուրջի վերանորոգում | 27,2 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | Ս.թ. փետրվար ամսին ներկայացվել է սուբվենցիոն ծրագիր: |
| 39 | Ագարակ քաղաքում զբոսայգու հիմնում | 37,7 | 0,0 | 33,9 | 0,0 | — | Կատարված է: |
| 40 | Աղբահանության համակարգի բարելավում | 60,0 | 0,0 | 75,9 | 0,0 | — | Ձեռք է բերվել 3 աղբատար և 308 աղբաման (որից 148-ը՝ մետաղական, 160-ը պլաստիկ), 2019 թվականից աղբահանություն կիրականացվի նաև համայնքի գյուղական բնակավայրերում |
| 41 | Լեհվազ գյուղի դպրոցում ջեռուցման համակարգի անցկացում | 7,8 | 0,0 | 5,9 | – | — | Իրականացվել է |
| 42 | Մեղրի համայնքի Ագարակի գոյություն ունեցող ջրավազանի վերանորոգման և բարեկարգման, Վահրավարի գոյություն ունեցող ջրավազանի վերանորոգման,Կարճևան, Լեհվազ և Նռնաձոր գյուղերի նոր ջրավազանների կառուցման աշխատանքներ | 68,5 | 0,0 | 0,0 | 0,0 | 58,4 | Բուն շինարարական աշխատանքներն ավարտվել են: Որոշակի հարդարման աշխատանքների կատարումից հետո հնարավոր կլինի հանձնել շահագործման: |
| 43 | Զբոսայգու հիմնում Մեղրի քաղաքում | 42, 98 | 0,0 | 0,0 | 35,7 | 7,3 | Կատարված է: |
| 44 | Ագարակի վարչական շենքի հիմնանորոգում | 6,9 | 0,0 | 0,0 | 0,0 | 5,9 | Դրամաշնորհային ծրագիր է, ֆինանսավորվել է Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից: Կազմվում են նախագծանախահաշվային փաստաթղթերը: Առաջիկայում կմեկնարկվի գնման գործընթացը: |
| 45 | Ավտոկայանատեղիների և հարակից շուկաների կառուցում Մեղրիի մաքսակետին կից և Մ-2 միջպետական ճանապարհի հարևանությամբ /մաքսակետից 11 կմ հեռավորության վրա» | 94,86 | 0,0 | 0,0 | 88,9 | 6,0 | Իրականացվել է համայնքի և պետական բյուջեի միջոցներով, «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» ծրագրի աջակցությամբ: Շինարարական աշխատանքներն ավարտվել են:Մաքսակետին կից կայանատեղիի շահագործումը հանձնվել է <<Մեղրի համայնքի կոմունալ տնտեսություն, բարեկարգում>> ՀՈԱԿ-ին: Ագրոշուկան դեռևս շահագործման չի հանձնվել: |

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ
4 մարտի 2021 թվական N11

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հավանություն տալ Մեղրի համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանին՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ---------------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ---------------
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ---------------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ---------------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ---------------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ---------------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ---------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 մարտի 2021 թվական N12

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԳԵՎՈՐԳ ԼՅՈՎԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Գևորգ Լյովայի Հարությունյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի թիվ 28/40 հասցեում գտնվող 20,3 քմ մակերեսով ավտոտնակը, 20,3 քմ մակերեսով ծածկը և նրանց համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,00203 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0045-0049, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N17022021-09-0034 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Գևորգ Լյովայի Հարությունյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դ) ենթակետով սահմանված գներով՝

1)Ավտոտնակի համար 10 000 դրամ x 0,1209 x 20,3 քմ = 24 543 (քսանչորս հազար հինգ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ.

2)Ծածկի համար 10 000 դրամ x 0,1209 x 20,3 քմ = 24 543 (քսանչորս հազար հինգ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ.

3)Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 1221 դրամ x 20,3 քմ = 24 787 (քսանչորս հազար յոթ հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ.

4)Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 23 000 (քսաներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ----------------

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------------

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------------

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------------

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ----------------

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ----------------

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4

ք. Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 մարտի 2021 թվական N13

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՎԱԶԳԵՆ ՍԼԱՎԻԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Վազգեն Սլավիկի Համբարձումյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնքի Լիճք գյուղ Ծակ քարի թաղամաս թիվ 7/11 հասցեում գտնվող 69,47 քմ մակերեսով բնակելի տունը և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,11311 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-039-0307-0001, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N23022021-09-0043 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Վազգեն Սլավիկի Համբարձումյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի ա) և ե) ենթակետերով սահմանված գներով՝

1)բնակելի տան համար 30 000 դրամ x 0,035 x 69,47 քմ = 72 944 (յոթանասուներկու հազար ինը հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ.

2)պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 96 դրամ x 1000քմ = 96 000 (իննսունվեց հազար) ՀՀ դրամ.

3)ինքնակամ կառույցով զբաղեցված տարածքի առավելագույն մակերեսի չափից ավելի հողամասի համար կադաստրային արժեքի եռապատիկի չափով՝ 288 դրամ x 131,1 քմ = 37 757 (երեսունյոթ հազար յոթ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ.

4)համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝18 500 (տասնութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ---------------

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ---------------

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ---------------

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ---------------

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ---------------

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ ---------------

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ---------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4 ք. Մեղրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 մարտի 2021 թվական N14

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԱՆԱՀԻՏ ԵՐՎԱՆԴԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Անահիտ Երվանդի Ղազարյանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 32/20 հասցեում գտնվող 38,9 քմ մակերեսով խանութը և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,00389 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0065-0081, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N22022021-09-0025 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Անահիտ Երվանդի Ղազարյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի բ) ենթակետով սահմանված գներով՝

1)խանութի համար 90 000 դրամ x 0,086 x 38,9 քմ = 301 086 (երեք հարյուր մեկ հազար ութսունվեց) ՀՀ դրամ.

2)պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 528դրամ x 38,9 քմ = 20 540 (քսան հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ.

3)համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 33 000 (երեսուներեք հազար) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ---------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ---------
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ---------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ---------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ---------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ ---------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ---------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4

ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ
4 մարտի 2021 թվական N15
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հարկային օրենսգրքի» 245-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N822-Ն որոշմամբ, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Սահմանել գույքահարկի արտոնություն և ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մրգանուշ փ. , 1 փկղ. տ. 9 հասցեում հաշվառված Ապավեն Աշոտի Բեգլարյանին (ծնված 07.08.1980թ., ՀԾՀ՝ 1708800107) սեփականության իրավունքով իրեն պատկանող MERCEDES-BENZ C230 մակնիշի (թողարկում՝ 2007թ. , պետ. համարանիշ՝ 36SQ361, ձիաուժ՝ 204) ավտոմեքենայի համար տրամադրել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝ 57 600 (հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով՝ ազատելով 2021թ.-ի տարեկան գույքահարկի վճարումից:

2.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ----------------------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------------------
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------------------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------------------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ----------------------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ----------------------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# ՈՐՈՇՈՒՄ

4 մարտի 2021 թվական N16

## ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2020 թվականի գույքագրման փաստաթղթերը հիմնական միջոցների և տնտեսական գույքի գծով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ---------------------------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ---------------------------
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ---------------------------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ---------------------------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ---------------------------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ---------------------------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ---------------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Մեղրի

Հավելված

Մեղրի համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 4-ի N16 որոշման

## ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| h/h | ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ | Ընդամենը հիմնական միջոցներ |
|---|---|---|
| | | 0 10 |
| 1 | **ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ** | **1 152 558,0** |
| 2 | **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ** | **1 613,0** |
| 3 | **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ** | **675,0** |
| 4 | **ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ** | **59 224,5** |
| 5 | **ՇՎԱՆԻՁՈՐ և ԱԼՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ** | **261 084,5** |
| 6 | ՆՌՆԱՁՈՐԻ ԲՆԱԿՎԱՅՐ | **7 046,9** |
| 7 | ՄԵՂՐԻԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | **14 620,8** |
| 8 | ԼԵՀՎԱԶ ԲՆԱԿԱՎԱՅՐ | **61 349,0** |
| 9 | ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ | 2 299,4 |
| 10 | ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ | 7 688,7 |
| 11 | ԿԱՐՃԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ | 23 363,5 |
| 12 | ՏԱՇՏՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ | 16 515,7 |
| 13 | ՎԱՐԴԱՆԻՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ | 2 911,3 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1 610 950,3** |

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 մարտի 2021 թվական N17

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ԱՐՍԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Արսեն Գուրգենի Բաբայանի կողմից ներկայացված դիմումը, գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին համաձայնագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Գուդեմնիս գյուղ 3-րդ փողոց թիվ 10/14 հասցեում գտնվող 26,3 քմ մակերեսով ծածկը և նրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի հողերի կատեգորիա <<բնակելի կառուցապատման հողեր>> գործառնական նշանակության 0,03294 հա մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-029-0027-0003, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26022021-09-0045 վկայական) գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք), օրենքով սահմանված կարգով օտարել Արսեն Գուրգենի Բաբայանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով սահմանված գներով.

1)Ծածկի համար 10 000 դրամ x 0,0456 x 26,3 քմ = 11 993 (տասնմեկ հազար ինը հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ.

2)Պահպանման և սպասարկման համար ամրակայած հողատարածքի համար 92,4 դրամ x 329,4 քմ = 30 437 (երեսուն հազար չորս հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ:

3)Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի վերը նշված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 18500 (տասնութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (վճարման անդորրագրերի հիման վրա):

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ------------------

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ------------------

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ------------------

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ------------------

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ------------------

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ------------------

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4

ք. Մեղրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 մարտի 2021 թվական N18

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի «Մեղրի համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին» N6 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1)որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի խոշորացված համայնքի (Մեղրի քաղաք, Ագարակ քաղաք, Ալվանք, Վարդանիձոր, Այգեձոր, Թխկուտ, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար և Տաշտուն բնակավայրեր) գլխավոր հատակագծի նախագծերը (գոտևորման նախագծերը) հաստատելու մասին»

2) որոշման 1-ին կետում «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի» բառերից հետո լրացնել «խոշորացված» բառը, իսկ «համայնքի» բառից հետո լրացնել (Մեղրի քաղաք, Ագարակ քաղաք, Ալվանք, Վարդանիձոր, Այգեձոր, Թխկուտ, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար և Տաշտուն բնակավայրեր) բառերը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ----------------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------------
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ----------------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ ----------------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ
4 մարտի 2021 թվական N19
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ գյուղում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0,50225 հա արոտավայրի (կադաստրային ծածկագիր՝ 09-037-0309-0001-հց) աճուրդային կարգով օտարմանը՝ մեկնարկային գին սահմանելով 301 350 (երեք հարյուր մեկ հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)
ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

4 մարտի 2021 թվական N20

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 27.01.2021թ. N5 դրական եզրակացությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ալվանք բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերից 3.94768 հեկտար մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-009-0101-0137, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N16102019-09-0013)՝ համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ <<ընդերքօգտագործման հողեր>> գործառնական նշանակության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման համար::

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Մեղրի

# Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ

Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ <<ընդերքի օգտագործման համար տրամադրված հողեր>> գործառնական նշանակության փոխադրվող 3,94768 հա հողամասի

Մ 1:5000

Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 4-ի թիվ 20 որոշման




3,94768 հա (գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք)

Շրջադարձային կետեր

Կադաստրային ծածկագիր՝ 09-009-0101-0137

| | |
|---|---|
| X=8615416.4300 Y=4312710.0300 | X=8615353.5100 Y=4312761.4800 |
| X=8615414.8400 Y=4312713.4100 | X=8615350.4500 Y=4312766.2800 |
| X=8615409.4200 Y=4312721.0200 | X=8615349.3200 Y=4312767.3700 |
| X=8615399.1800 Y=4312725.7000 | X=8615331.0000 Y=4312835.0000 |
| X=8615392.0500 Y=4312727.6500 | X=8615331.0000 Y=4312835.0000 |
| X=8615386.7200 Y=4312727.3800 | X=8615357.0000 Y=4312961.0000 |
| X=8615382.5800 Y=4312726.2100 | X=8615441.0000 Y=4313002.0000 |
| X=8615357.0000 Y=4312739.0000 | X=8615454.0000 Y=4312838.0000 |
| X=8615353.8200 Y=4312750.7400 | X=8615600.0000 Y=4312773.0000 |
| X=8615354.0100 Y=4312750.9600 | X=8615551.0000 Y=4312713.0000 |
| X=8615354.7100 Y=4312755.4600 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ
4 մարտի 2021 թվական N21

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՌՈԳՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Կարճևան բնակավայրում գտնվող 273մմ տրամագծով 2500 մետր խողովակաշարը օտարել հրապարակային սակարկությունների միջոցով՝ մեկնարկային գին սահմանելով 1 գծամետրը 2000 (երկու հազար) ՀՀ դրամ (ըստ «Տիգրիս» ՍՊԸ-ի կողմից 21 հունվարի 2021 թվականին տրված շուկայական գնահատման թիվ 02/21. 01. 2021 հաշվետվության):
1)Գնորդի կողմից փոխհատուցման է ենթակա գույքի արժեքի գնահատման հետ կապված վճարը՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
2.Առաջարկել համայնքի ղեկավարին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել աճուրդը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. մարտի 4
ք. Մեղրի